ՀԱԿԱԿ

ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՍՆՆԴԱՅԻՆ ԵՎ ՔԻՄԻԱԿԱՆ ԹՈՒՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿ

ՓԵՏՐՎԱՐ 2019 թ.

ՏԵՂԵԿԱԳԻՐ
ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՍՆՆԴԱՅԻՆ ԵՎ ՔԻՄԻԱԿԱՆ ԹՈՒՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2019թ. փետրվար ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում I խմբի միկրոօրգանիզմներով հարուցված, հանրային առողջապահության ոլորտում միջազգային նշանակության արտակարգ իրավիճակ կամ բռնկում (բռնկման վտանգ) առաջացնող հիվանդություններ չեն արձանագրվել:

Հատուկ վտանգավոր վարակներ

Բրուցելոզ

2019թ. փետրվարին հանրապետությունում արձանագրվել է բրուցելոզի 11 դեպք, որից 1-ը՝ Արագածոտնի, 2-ը՝ Արարատի, 2-ը՝ Սյունիքի, 2-ը՝ Գեղարքունիքի, 2-ը՝ Կոտայքի, 2-ը՝ Շիրակի մարզերում: Երևան քաղաքում բրուցելոզի դեպքեր չեն արձանագրվել: Յուրաքանչյուր դեպքի մասին տեղեկատվություն է տրամադրվել ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը՝ կենդանիների շրջանում համապատասխան միջոցառումներ կազմակերպելու համար:



Գծապատկեր 1.Հայաստանի Հանրապետությունում 2018-2019 թթ հունվար-փետրվար ամիսներին արձանագրված բրուցելոզի դեպքերը

Ըստ գծապատկեր 1-ի տվյալների՝ 2019թ. փետրվարին արձանագրված բրուցելոզ հիվանդության դեպքերը համեմատած 2018թ. նույն ժամանակահատվածի հետ նվազել են 1.0 անգամ:

Օդակաթիլային վարակներ

Գրիպ և Սուր շնչառական վարակ

2019թ. փետրվար ամսին Հայաստանի Հանրապետության տարածքում շարունակվել է գրանցվել սուր շնչառական վարակներով՝ (այսուհետ ՍՇՎ), պայմանավորված հիվանդացության միջին ակտիվություն: Առավել շատ դեպքեր արձանագրվել են 0-4 տարեկանների շրջանում: 2019թ. փետրվար ամսվա հիվանդացիության ընդհանուր ցուցանիշը 2018թ. նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 1.1 անգամ:



Գծապատկեր 2. 2018-2019 թթ. հոկտեմբեր – փետրվար ամիսների ընթացքում արձանագրված սուր շնչառական վարակների հիվանդացության ցուցանիշն ըստ 100.000 բնակչի

Ըստ գծապատկեր 2-ի տվյալների՝ ՍՇՎ դեպքերը համեմատած նախորդ ամսվա հետ նվազել են՝ 1.3 անգամ:

Փետրվար ամսվա ընթացքում գրիպի դետքային համաճարակաբանական հսկողության շրջանակներում, գրիպանման հիվանդություններից և ծանր սուր շնչառական վարակներից հետազոտվել է 313 նմուշ: Լաբորատոր հետազոտության արդյունքում արձանագրվել է գրիպի Ա տեսակի H1N1 ենթատեսակի 98 դեպք, գրիպ Ա տեսակի H3 ենթատեսակի 31 դեպք: 2018թ-ի նույն ժամանակահատվածում դետքային համաճարակաբանական հսկողության շրջանակներում հետազոտված նմուշներից արձանագրվել է գրիպ Բ տեսակի՝ 90 դեպք, գրիպի Ա տեսակի H1N1 ենթասեսակի՝ 42 դեպք:

Այլ օդակաթիլային վարակներ (ջրծաղիկ, քութեշ, վարակային մոնոնուկլեոզ)

Ջրծաղիկ

2019թ. փետրվարին հանրապետությունում արձանագրվել է ջրծաղիկի 963 դեպք:



Գծապատկեր 3.Հայաստանի Հանրապետությունում 2018 և 2019 թթ հունվար-փետրվար ամիսներին արձանագրված ջրծաղկի դեպքերը

Ըստ գծապատկեր 3-ի տվյալների՝ 2019թ. փետրվարին արձանագրված ջրծաղկի դեպքերը նախորդ ամսվա համեմատ նվազել են 1.3 անգամ, իսկ 2018թ նույն ժամանակահատվածի համեմատ՝ 1.2 անգամ: Ընդհանուր առմամբ դեպքերի 91.3% արձանագրվել է 0-18 տարեկանների շրջանում, որից 39,6%-ը՝ 0-6 տարեկան երեխաների շրջանում, կազմակերպ կոլեկտիվներում: Դեպքերի մեծ մասը՝ 75.2%, արձանագրվել է քաղաքաբնակ բնակչության շրջանում, որտեղ առկա են պայմաններ մարդկանց ավելի սերտ շփման համար: Նշված ժամանակահատվածում հղիների շրջանում ջրծաղկի դեպքեր չեն արձանագրվել:

Ընտանեկան և կազմակերպ օջախներում հնարավորության սահմաններում առաջին դեպքերը մեկուսացվում են և հսկողություն է սահմանվում հիվանդի հետ շփված երեխաների նկատմամբ:

Քութեշ

2019թ. փետրվարին հանրապետությունում արձանագրվել է քութեշի 63 դեպք: Դեպքերի մեծ մասը արձանագրվել է քաղաքաբնակ բնակչության շրջանում՝ 82.5%: Առավել շատ դեպքեր արձանագրվել են 3-6 տարեկան երեխաների շրջանում՝ 43 դեպք, ինչը կազմում է արձանագրված ընդհանուր դեպքերի թվի 68.2%-ը:



Գծապատկեր 4. Հայաստանի Հանրապետությունում 2018 և 2019 թթ. հունվար-փետրվար ամիսներին արձանագրված քութեշի դեպքերը

Ըստ գծապատկեր 4-ի տվյալների 2019թ. փետրվարին արձանագրված քութեշի դեպքերը նախորդ ամսվա համեմատ աճել են 1.1 անգամ, 2018թ. նույն ժամանակահատվածի համեմատ՝ ևս 1.1 անգամ: Բոլոր դեպքերն ենթարկվել են համաճարակաբանական հետազոտության, որի նպատակն է հնարավոր վարակի աղբյուր հանդիսացող հիվանդության ջնջված ձևերով հիվանդների հայտնաբերումը, կանխելով վարակի հետագա տարածումը:

<u>Վարակային մոնոնուկլեոզ</u>

2019թ. փետրվարին հանրապետությունում արձանագրվել է մոնոնուկլեոզի 51 դեպք, որից 84.3%ը կազմում են 0-18 տարեկան երեխաները:



Գծապատկեր 5.Հայաստանի Հանրապետությունում 2018 և 2019թթ հունվար-փետրվար ամիսներին արձանագրված վարակային մոնոնուկլեոզի դեպքերը

Ըստ գծապատկեր 5-ի տվյալների՝ 2019թ. փետրվարին արձանագրված վարակային մոնոնուկլեոզի դեպքերը նախորդ ամսվա համեմատ աճել են՝ 1.1 անգամ, իսկ 2018թ. նույն ժամանակահատվածի համեմատ՝ 1.3 անգամ: Բոլոր դեպքերի հայտնաբերման ժամանակ իրականացվել է համաճարակաբանական հետազոտություն՝ ուղղված հիվանդի շրջապատում հիվանդների և վարակակիրների հայտնաբերմանը և մեկուսացմանը:

Աղիքային վարակիչ հիվանդություններ

Հայաստանի Հանրապետությունում 2019թ. փետրվար ամսին արձանագրվել է աղիքային վարակիչ հիվանդությունների 573 դեպք, որից 170 դեպքն արձանագրվել է Երևան քաղաքում, 403-ը՝ մարզերում: 2018թ. նույն ժամանակահատվածի համեմատ աղիքային վարակներով հիվանդացությունը աննշան աճել է: 2019թ. հունվար ամսվա համեմատ (523 դեպք) աղիքային վարակներով հիվանդացությունը աճել է մոտ 1.1 անգամ:

Արձանագրված աղիքային վարակիչ հիվանդությունների օջախներում իրականացվել են համաճարակաբանական հետազոտություններ և հակահամաճարակային միջոցառումներ՝ վարակի հետագա տարածումը և բռնկումների առաջացումը կանխարգելելու նպատակով:



Գծապատկեր 6. Աղիքային վարակների հիվանդացությունը 2018-2019թթ. հունվար – փետրվար ամիսներին

2019թ. փետրվար ամսին Հայաստանի հանրապետությունում աղիքային վարակիչ հիվանդությունների բռնկումներ չեն արձանագրվել:

Իմունականխարգելում

Հայաստանի Հանրապետությունում կառավարելի վարակիչ հիվանդությունների առումով իրավիճակը բարենպաստ է: 2019թ փետրվար ամսին հանրապետությունում գրանցվել է կապույտ և հարկապույտ հազի 8 դեպք չպատվաստած և թերի պատվաստված անձանց շրջանում:

1 տարեկան երեխաների շրջանում պատվաստումներում ամբողջական ընդգրկվածության միջին հանրապետական ցուցանիշը փետրվար ամսին կազմել է 90% (նպատակային ցուցանիշը՝ 90%): 2 տարեկան երեխաների շրջանում պատվաստումներում ամբողջական ընդգրկվածության միջին հանրապետական ցուցանիշը կազմել է 92 % (նպատակային ցուցանիշը՝ 90%): 7 տարեկան երեխաների շրջանում պատվաստումներում ամբողջական ընդգրկվածության միջին հանրապետական ցուցանիշը կազմել է 96% (նպատակային ցուցանիշը՝ 90%):

Բնակչության շրջանում պատվաստումներում ընդգրկվածության բարձր ցուցանիշների շարունակական ապահովումը կնպաստի հանրապետությունում կառավարելի վարակիչ հիվանդությունների առումով բարենպաստ համաճարակային իրավիճակի պահպանմանը:

Վիրուսային հեպատիտներ

Սույն թվականի փետրվար ամսին արձանագրվել է սուր վիրուսային հեպատիտի 4 դեպք: Հայաստանի Հանրապետությունում փետրվար ամսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ սուր վիրուսային հեպատիտի հիվանդացության ցուցանիշը նվազել է 1.3 անգամ:

Քիմիական թունավորումներ

Հայաստանի Հանրապետությունում փետրվար ամսվա ընթացքում արձանագրված քիմիական թունավորումների 44.5%-ը գրանցվել է Երևան քաղաքում, իսկ 55.5%-ը՝ մարզերում: Արձանագրված դեպքերի գերակշիռ մասը՝ 39.8%-ը, առաջացել է օրգանական լուծիչների, շմոլ գազի և այլ կենցաղային նյութերի թունավոր ազդեցությունից, ինչը պայմանավորված է շմոլ գազով թունավորումների սեզոնային բարձրացումով, 25.9%-ը՝ դեղամիջոցներով թունավորումներից՝ ինքնաբուժման և ծնողի անուշադրության հետևանքով, 22.2%-ն՝ ալկոհոլային թունավորումներից՝ ալկոհոլի բարձր

չափաբաժինների ընդունումից, 5.1%-ն՝ օճառների և լվացող նյութերի թունավոր ազդեցությունից, 1.4%-ը՝ թունաքիմիկատների և 1.4%-ը՝ խոտաբույսերի թունավոր ազդեցությունից, 4.2%-ն՝ այլ և չճշտված ծագման թունավոր նյութերի ազդեցությունից:

2019թ. փետրվար ամսին՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ քիմիական թունավորումների հիվանդացության ցուցանիշը աճել է 1.6 անգամ:

Մակաբուծային հիվանդություններ

Հանրապետությունում 2019թ. փետրվարին մալարիայի համաճարակային իրավիճակը հանգիստ է եղել, արձանագրվել է արևադարձային մալարիայի 1 բերովի դեպք՝ Սիերա-Լեոնեից և ընդերային լեյշմանիոզի 1 դեպք՝ Լոռու մարզի Շնող գյուղից:

Սննդային թունավորումներ

Հանրապետության տարածքում փետրվար ամսին արձանագրվել է բոտուլիզմի 2 դեպք՝ 3 տուժածով: 0-14 տարեկան երեխաների շրջանում դեպքեր չեն արձանագրվել: Բոտուլիզի դեպքերը արձանագրվել են Երևան քաղաքում և Շիրակի մարզում: Բոտուլիզմի պատճառ է հանդիսացել տնային պայմաններում պահածոյացված կանաչ պղպեղը և շուշանը: Բոտուլիզմի դեպքերի վերջնական ախտորոշումը դրվել է համաճարակաբանական տվյալների և կլինիկական նշանների հիման վրա:

Սննդային թունավորման դեպքերի կանխարգելման նպատակով օջախներում իրականացվել է բժշկահիգիենիկ գիտելիքների տարածում՝ սննդային թունավորումների առաջացման պատճառների, կանխարգելման հիմնական սկզբունքների վերաբերյալ: Սննդային թունավորումների կանխարգելման և բնակչության իրազեկվածության բարձրացման նպատակով, տարբեր լրատվամիջոցներով պարբերաբար իրականացվում է քարոզչություն:

Կատարող՝ Աննա Աղաջանյան
ԱՆ «ՀՎԿ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ